

դերեւ ելաւ, երբ 1847 Օգոստոսին՝ փողերանոցի գործակալութիւնն յանձնուեցաւ Տիւղեան Սերգասի միամօր որդւոյն՝ Միհրան Չէլէպոյն:

Իւր երիտասարդական աշխուժին առաջին գործն եղաւ՝ Յակոբ Չէլէպոյն շոգեշարժ մեքենաներու պատրաստած խորհուրդն իրագործել եւ կատարելագործել: Սկսաւ այնուհետեւ փողերանոցն եւրոպական ոճով դրամ կտրել, որով բնականապէս ծախուց ալ մեծ խնայութիւն կ'ըլլար:

Այս ժամանակներս թուովէ Շովեյի խորհրդով 12 հոգի միաբանած՝ մեծ դրամատուն մը պիտի հաստատէին. որոնց գլուխը պիտի անցնէր Միհրան Չէլէպի: Գործն ըստ բաւականի յառաջագէտ վիճակի մէջ էր, եւ մինչեւ նաեւ շատերուն վերջացած խնդիր մը կ'երեւէր. սակայն ուսական անակնկալ պատերազմին լուրը խափանեց այս ձեռնարկութիւնը:

1855ին Միհրան Չէլէպին իւր այնչափ ծառայութեանց փոխարէն Պէյո-Ռէան բարձր տնտղոսին արժանացաւ՝ արքունի հրամանաւ: Հոս նոր ասպարէզ մը կը բացուի Միհրան Պէյին առջեւ. ետեւէ ետեւ պաշտօնէ պաշտօն կը բարձրանար, որ անշուշտ իւր կարողութեան աստիճանին վկայութիւն մըն էր. 1856 Մարտ 3ին թանգիտի Ռէճէպին անդամ կարգեցաւ. 1857 Ապրիլ 3ին Մէճէպի Ռէճէպի (հասարակաց կրթութեան) խորհրդական անուանեցաւ: Բայց ամենամեծ գործը կրնանք համարիլ՝ Գոնուլի հաստատութիւնն, որ 1859 Օգոստոս 1ին իրեն յանձ-